# <u>ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ</u>

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սիրելի՛ հաճախորդ, տեղեկացնում ենք, որ Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես **<u>դատական</u>** կարգով, այնպես էլ **<u>Ֆինանսական համակարգի հաշտարարի</u>** միջոցով:

**<u>Դատարան</u>** դիմելու դեպքում Ձեր և */ընկերության անվանումը/* միջև ծագած վեճը լուծում է դատարանը: Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում: Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:

**<u>Ֆինանսական համակարգի հաշտարարին</u>** դիմելու դեպքում Ձեր և */ընկերության անվանումը/* միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայությունները անվճար են:

Բողոք ունենալու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք */ընկերության անվանումը/*: */Ընկերության անվանումը/* պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: */Ընկերության անվանումը/* պատասխանը ստանալուց հետո Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե՝

1. Բողոք ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր և Դուք չեք ստացել */ընկերության անվանումը/* պատասխանը, կամ
2. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում, կամ
3. Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը (կամ դրան համարժեք արտարժույթով գումարը), կամ
4. */Ընկերության անվանումը/* պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս, կամ
5. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել 2008թ. օգոստոսի 2-ից առաջ:

Զգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:

**Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ**

**Հաշտարար՝** ........................................

**Հասցե՝** ..................................................

**Հեռ.՝** ..................................................

**Էլ. հասցե՝** ..................................................

**Ֆաքս՝**

**Ընկերությունը պետք լրացնում է սույն հավելվածի 2-րդ կետում ավելա '*' կամ '**' նշանի միջոցով պարտավորվելով տեղեկատվությունը ըստ դրան:**

* այս նշումը կատարվում է, եթե Ընկերությունը Ֆինանսական համակարգի հաշտարարի գործունեության հետ կնքված գրավոր համաձայնագրով հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից:

** այս նշումը կատարվում է, եթե Ընկերությունը Ֆինանսական համակարգի հաշտարարի գործունեության հետ չի կնքել գրավոր համաձայնագիր Ֆինանսական համակարգի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ:

**Դուք** կարող եք նաև բողոքներով դիմել Կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և */ընկերության անվանումը/* միջև վեճերը, սակայն կարող է */ընկերության անվանումը/* նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ */ընկերության անվանումը/* խախտել է օրենքի պահանջները:

**ՀՀ Կենտրոնական բանկ**

**Հասցե՝** ----------------------------------------

**Հեռ.՝** …այստեղ լրացվում է Կենտրոնական բանկի ... սպառողների շահերի պաշտպանության համար սպասարկման ... հեռախոսահամարները..

**Էլ. հասցե՝** ----------------------------------------

**Ֆաքս՝** ----------------------------------------

**Կայք՝** ----------------------------------------



Հարգելի հաճախորդ, հայտնում ենք, որ եթե Ձեր և */ընկերության անվանումը/* միջև կնքվել է **արբիտրաժային համաձայնություն,** դա նշանակում է, որ */ընկերության անվանումը/* հետ կնքված պայմանագրից բխող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրիբունալի կողմից: Դուք զրկվում եք */ընկերության անվանումը/* հետ կնքված պայմանագրից բխող վեճերի կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից: Արբիտրաժային տրիբունալի վճիռները, որպես կանոն, դատարանի կողմից վերանայման ենթակա չեն:

*Սիրելի՛ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ ՄոբիԴրամ ՓԲԸ-ն չի հրաժարվել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից:
Դա նշանակում է, որ ՄոբիԴրամ ՓԲԸ-ն կարող է որոշ դեպքերում դատական կարգով վիճարկել Ֆինաասական համակարգի հաշտարարի կողմից ՄոբիԴրամ ՓԲԸ-ի դեմ կայացված որոշումները:
**Սիրելի՛ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ ՄոբիԴրամ ՓԲԸ-ն չի հրաժարվել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից:
Դա նշանակում է, որ ՄոբիԴրամ ՓԲԸ-ն կարող է որոշ դեպքերում դատական կարգով վիճարկել Ֆինաասական համակարգի հաշտարարի կողմից ՄոբիԴրամ ՓԲԸ-ի դեմ կայացված որոշումները: